Զահրատ

Սիրերգութիւն

Սեւ հագնիմ
Ամպ հագնիմ անձրեւ հագնիմ
Ցաւը սրտիկս է այրեր
Աշնան չոր տերեւ հագնիմ

Հուր ժողվեմ
Իմ սիրածէս լուր ժողվեմ
Հուրը զոգնան ու երթան
Ես նստիմ փրփուր ժողվեմ

Լուռ քալեմ
Ցաւը սրտիս ծուռ քալեմ
Երբ հանդիպիմ սիրածիս
Ալ հարց չտամ ուր քալեմ

Լոյս իյնայ
Աչքերուն թող յոյս իյնայ
Այդ աչքերովն երբ նայի
Նայուածքը հոգւոյս իյնայ

Հով ըլլամ
Հովուն պէս գինով ըլլամ
Սիրտս զարնէ խենթի պէս

Երբ սիրածիս քով ըլլամ

Տօն ըլլայ
Իմ սիրածս հոն ըլլայ
Ծաղիկը շուտ կը թոռմի
Սիրածս կոկոն ըլլայ

Գինի տամ
Մարդ չտեսնէ գաղտնի տամ
Վարդ այտերը կարմրնան
Համբուրեմ երանի տամ

Տուն մտնեմ
Տան սեմէն ժպտուն մտնեմ
Գըլուխս դընեմ ուսին
Ու երջանիկ քուն մտնեմ

Երազիս
Աստղ մը գայ նստի սազիս
Ես այդ սազով տաղ ըսեմ
Աստղերը թող լսեն զիս

Եար ըսեմ
Սիրածիս գոհար ըսեմ
Թէ մեռնիմ լայ ետեւէս
Ողջնամ մի լար ըսեմ